ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2013 թվականի N 166-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՍՈԼԱԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 59-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013թվականի հունվարի 22-ի N 09-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. 2013թվականի ապրիլի 29-ից մայիսի 2-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Սոլակի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում ֆինանսական աուդիտ իրականացնելու նպատակով ստեղծել աուդիտի առաջադրանքի աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) Կոմիտաս Հունանյան - խմբի ղեկավար, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ,

2) Անահիտ Ստեփանյան – անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,

3) Էրիկ Ավանեսյան– անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ:

2. Աուդիտորական խմբին՝ աուդիտորական առաջադրանքը իրականացնել 2012 թվականի համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության և դրանց ստանդարտների կիրառելի հիմունքներին համապատասխանության, կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերին ներկայացվող պահանջների պահպանման և զուտ շահույթի տնօրինման գործընթացների գնահատման նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ